ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

—— ----- 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի №635Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 2-ի №235-Ն որոշումը և հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի ապրիլի 25-ի №1045 և մայիսի 2-ի №1093 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 19-ի «ՖՏԱ ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման և համարների զբաղեցման թույլտվություններ տրամադրելու մասին» №635Ա որոշման՝
   1) №3 հավելվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «6) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի կարճ կոդով ծառայությունների 8388, 8105, 8106, 8107, 8108, 8109, 8112, 8113, 8114, 8115, 8870, 8117, 8120, 8122, 8123, 8988, 8717, 8088, 8909,

8128, 8129, 8140, 8141, 8142, 8803, 8786, 8810, 8890, 8148, 8011, 8150, 8152, 8980, 8535, 8155, 8018, 8157, 8158, 8603, 8903, 8104, 8124, 8642, 8889, 8127, 8833, 8844, 8822, 8599, 8699, 8850, 8801, 8979, 8266, 8747, 8268, 8485, 8283, 8590, 8085, 8012, 8013, 8014, 8015, 8016, 8017, 8019, 8021, 8023, 8024, 8025, 8026, 8027, 8028, 8029, 8031, 8032, 8034, 8035, 8036 համարները:»,

2) №3.1 հավելվածի 6-րդ աղյուսակում 8085 թվից հետո լրացնել «, 8012, 8013, 8014, 8015, 8016, 8017, 8019, 8021, 8023, 8024, 8025, 8026, 8027, 8028, 8029, 8031, 8032, 8034, 8035, 8036» թվերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք.Երևան
------- 2024թ.